



ԱՐԺԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
THE ARMENIAN PRELACY

Յուլիս 28, 1996
Թի 302/96

Արժանապատի
S. Ներսես Ա. ՋՈՆ. ՃԵՎԵՃԻԱՆ
Հովի Արևանայի եւ շրջակայի Ռայոս

Սիրելի Տեո Հայր,

Ստացանք ձեր 18 Յուլիս, 1996 թուակիր Աամակը, որով Ռդիմպիական խաղերու մասնակցող Հայաստանի Հանրապետութեամ մարզիկներու ի պատիւ մատուցող Սուրբ Պատարագին կը հրաիրէք Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Ա. Արքեպս. Աշճեանը իբրեւ պատուոյ հիւր մասնակցելու եւ ճաշկերոյթի ընթացքին տալու իր պատգամը:

Ընորհակալութիւն կը յայտնենք ձեր ազնիւ մտածումին համար: Վստահ ենք քաջատեղեակ էք որ նման պարագաներու ցանկալի պիտի ըլլար, որ այսպիսի հրաւեր մը առաջարկուէր Առաջնորդ Խաժակ Ա. Արքեպիսկոպոսի կողմէ եւ երկու Սորագան Հայրերը խորհրդակցարար տնօրինէին պարուն ու պատշաճը սուրբ պատարագի եւ ճաշկերոյթի ընթացքին տրուելիք պատգամներուն:

Մաղթելով ձեզի յաջողութիւն՝ Աստուածաբանոյ ձեր ծառայութեան մէջ,

Աղօթակից՝

Անուշաւան Մ. Արդ. Դավիէլեան
Առաջնորդական Փոխանորդ